ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2016 թվականի N 1307 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի

Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2016 թվականին հատկացնել 108.500,0 հազ. դրամ, որից՝ 108.250,0 հազ. դրամը (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով)՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին՝ աջակցություն, իսկ 250,0 հազ. դրամը (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով)՝ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1071-Ա որոշման 4-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով հատկացված գումարը նվիրաբերության և դրամաշնորհի պայմանագրերի հիման վրա համապատասխանաբար տրամադրել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին ու «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 22
Երևան

1307k.voroshum

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1307 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄԸ

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
բաժինը	խումբը	դասը		տարի
1	2	3	4	5
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	0.00
			այդ թվում՝	
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(108,500.00)
			այդ թվում՝	
	02		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	(108,500.00)
			այդ թվում՝	
		01	Գյուղատնտեսություն	(108,500.00)
			այդ թվում՝	
			06. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	(32,600.00)
			ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	
			որից՝	
			Առողջապահական և լաբորատոր նյութեր	(32,600.00)
			24. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար	(18,000.00)
			ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	
			որից՝	
			Այլ ընթացիկ դրամաշնորհներ	(18,000.00)

1	2	3	4	5
			25. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար	(54,600.00)
			ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	.
			որից՝	
			Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին	(54,600.00)
			28. Տոհմային երինջների ձեռքբերում	(3,300.00)
			ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	
			որից՝	
			Այլ հարկեր	(3,300.00)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	108,500.00
			այդ թվում՝	
	01		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	108,500.00
			այդ թվում՝	
		01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	108,500.00
			01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	
			ՀՀ կառավարություն	108,500.00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1307 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.14 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
		ոչ ֆինանսական ցուցանիշներ	ֆինանսական ցուցանիշներ
		տարի	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները **1. Քաղաքականության միջոցառումներ** **1.1. Ծառայություններ**			
Ծրագրային դասիչը	Մատուցվող ծառայության անվանումը «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը վարձավճարի մասնաբաժնի փոխհատուցում Նկարագրությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1071-Ա որոշման 4-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը վարձավճարի մասնաբաժնի փոխհատուցում		
1059	ԱԾ04		
Քանակական	Մշակված չէ		x
Որակական	Մշակված չէ		x
Ժամկետայնության	Մշակված չէ		x
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		x	250.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն				
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հողագործությունից ստացվող արդյունքի բարելավում				
Ծառայություն մատուցողի անվանումը «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ				
Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը Կենսապատվաստանյութերով ապահովում Նկարագրությունը Անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման համար պատվաստուկների ձեռքբերում		
1116	ԱԾ05			
Քանակական		Բրուցելոզ՝ Ռոզ-Բենգալ		x
		Բրուցելոզ՝ ԱՌ		x
		Լեյկոզ		x
		Տուբերկուլյոզ		x
		Դաբաղ		x
		Սիբիրախտ		x
		Էմկար		x
		Բրադզոտ		x
		Պաստերելյոզ		x
		Ժանտախտ՝ խոզերի		x
		Մեղուների վարրոատոզ		x
		Թռչունների կեղծ ժանտախտ		x
		Կաուստիկ սոդա		x
		Քլորակիր		x
		Ֆորմալին		x
		Տերմոպայուսակ		x

Որակական	Ձեռք բերված կենսապատվաստանյութերի համապատասխանությունը միջազգային չափանիշներին (տոկոս)		x
Ժամկետայնության	Կենսապատվաստանյութերի ձեռքբերման ժամկետը		x
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		x	(32,600.00)

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը
1116 Անասնաբուժական ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը
Անասնաճարակային կայուն ֆոնի ապահովում

Ծառայություն մատուցողի անվանումը
«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարված մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններ

1.2. Տրանսֆերտներ

Ծրագրային դասիչը		Տրանսֆերտի անվանումը Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար Նկարագրությունը Հողօգտագործողներին ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատչելի գներով տրամադրում
1022	ԾՏ02	

Շահառուների քանակը	Համայնքների քանակը		x
Գումարը (հազ. դրամ)		x	(18,000.00)
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը		1 անգամ	x

Շահառուների ընտրության չափանիշները
Յուրաքանչյուր տարվա բյուջեով ընտրված մարզերի հողատերեր

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը
1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը
Գյուղատնտեսական մթերքի և դրա վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում

Ծրագրային դասիչը		Տրանսֆերտի անվանումը Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման համար Նկարագրությունը Հողօգտագործողներին դիզելային վառելանյութի մատչելի գներով տրամադրում		
1022	ԾՏ04			
Շահառուների քանակը		Համայնքների քանակ		x
Գումարը (հազ. դրամ)			x	(54,600.0)
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը			1 անգամ	x
Շահառուների ընտրության չափանիշները Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով ընտրված մարզերի հողատերեր				
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր				
Վերջնական արդյունքի նկարագրությունը Գյուղատնտեսական մթերքի և դրա վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում				
Ծրագրային դասիչը		Տրանսֆերտի անվանումը Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացում Նկարագրությունը Աջակցություն՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացման համար		
1022	ԾՏ05			
Շահառուների քանակը				x
Գումարը (հազ. դրամ)			x	108,250.00
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը			1 անգամ	x
Շահառուների ընտրության չափանիշները Յուրաքանչյուր տարվա բյուջեով ընտրված մարզերի հողատերեր				
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր				
Վերջնական արդյունքի նկարագրությունը Գյուղատնտեսական մթերքի և դրա վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում				

1.8. Վարկերի տրամադրում				
Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը Տարաժամկետ վճարման պայմանով գյուղացիական տնտեսություններին կենդանիների տրամադրում		
1103	ՎՏ 01	Նկարագրությունը Տավարի բարձր մթերատու ցեղերի կենդանիների տրամադրում գյուղացիական տնտեսություններին՝ տարաժամկետ վճարման պայմանով (4 տարվա ընթացքում)		
Քանակական		Տրամադրվող կենդանիների քանակը, գլուխ		
Գումարը (հազ. դրամ)			x	(3,300.00)
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1103 Անասնաբուծական և տոհմաբուծական ծառայություններ				
Վերջնական արդյունքի նկարագրությունը Անասնապահության զարգացման խթանում				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1307 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (բաժինը/խումբը /դասը)	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	ՀՀ 2016 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)
ծրագիրը	միջոցառումը			
1116			ԾՐԱԳԻՐ	
			Անասնաբուժական ծառայություններ	(32,600.00)
			Ծրագրի նկարագրությունը Առավել վտանգավոր և մարդու, և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների դեմ կենդանիների պատվաստման իրականացում	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը Անասնաճարակային կայուն ֆոնի ապահովում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	
	ԱԾ05	04.02.01	Պատվաստանյութերի ձեռքբերում	(32,600.00)

			Մատուցվող ծառայության նկարագրությունը Անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման համար պատվաստուկների ձեռքբերում	
			Ծառայություն մատուցողի անվանումը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարված մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններ	
1022			ԾՐԱԳԻՐ	
			Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր	35,650.00
			Ծրագրի նկարագրությունը Համայնքներում գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, վերամշակմամբ և ագրոտուրիզմով զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի, այդ թվում՝ լիզինգի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը Գյուղատնտեսական մթերքի և դրա վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում	
			Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ	
	ԾՏ03	04.02.01	Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար	(18,000.00)
			Տրանսֆերտի նկարագրությունը Հողօգտագործողներին ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատչելի գներով տրամադրում	
	ԾՏ04	04.02.01	Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար	(54,600.00)
			Տրանսֆերտի նկարագրությունը Հողօգտագործողներին դիզելային վառելիքի մատչելի գներով տրամադրում	
	ԾՏ05	04.02.01	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացում	108,250.00

			Տրանսֆերտի նկարագրությունը Աջակցություն՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացման համար	
1103			ԾՐԱԳԻՐ	
			Անասնաբուծական և տոհմաբուծական ծառայություններ	(3,300.00)
			Ծրագրի նկարագրությունը Անասնապահությանը աջակցող և խթանող ծառայություններ	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը Անասնապահության զարգացման խթանում	
			Քաղաքականության միջոցառումներ. Վարկերի տրամադրում	
	ՎՏ01	04.02.01	Տարաժամկետ վճարման պայմանով գյուղացիական տնտեսություններին կենդանիների տրամադրում	(3,300.00)
			Մատուցվող ծառայության նկարագրությունը Տավարի բարձր մթերատու ցեղերի կենդանիների տրամադրում գյուղացիական տնտեսություններին՝ տարաժամկետ վճարման պայմանով (4 տարվա ընթացքում)	
			Ծառայություն մատուցողի անվանումը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարված մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններ	
1059			ԾՐԱԳԻՐ	
			Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	250.00
			Ծրագրի նկարագրությունը Բույսերի կարանտինային անվտանգության և բույսերի պաշտպանության ապահովում, բույսերի վնասակար օրգանիզմների բուսասանիտարական մոնիթորինգ ու գյուղատնտեսական մշակաբույսերի և անտառի առավել վնասակար օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում, սերմերի որակի ստուգում և սելեկցիոն նվաճումների պետական սորտափորձարկում, աջակցություն սերմաբուծությանը և երկրագործությանը	

			Վերջնական արդյունքի նկարագրությունը Հողագործությունից ստացվող արդյունքի բարելավում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	
	ԱԾ04	04.02.01	«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը վարձավճարի մասնաբաժնի փոխհատուցում	250.00
			Մատուցվող ծառայության նկարագրությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1071-Ա որոշման 4-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը վարձավճարի մասնաբաժնի փոխհատուցում	
			Ծառայություն մատուցողի անվանումը «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԴ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ